

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Ն-բ-ն-ի-ն-ի-ն):

Գլ-ի 2.

Երբ յեջմիածին. — Գեղորայք Էջմիածնի և արդիւնք. — Պարսկի օրչափ յարգեն զեկեղեցիս Հայոց. — Մայր Աթոռն Հայաստանեայց. — Աթոռն Կաթողիկոսական ի Հռոմայ. — Կաթողիկոսարան. — Եւրոպական կաճ կարասիք. — Խոսակցութիւն իմ ընդ Կաթողիկոսին Ներսիսի ի Պետերբուրգ. — Գիր նորա առ իս. — Տեղեկութիւն զկենաց և զընտրութիւն Ներսիսի, եւս եւ Կաթողիկոսացն յեջմիածին. — Կապուսթիւն եկեղեցեաց Հայոց. — Յարաբերութիւն նոցա ընդ Յոյս և Կաթոն. — Տարբերութիւն վարդապետութեան նոցա. — Յարաբերութիւն ընդ Պապին. — Հոգեւոր Տեսուչ. — Եկամտաւ Կաթողիկոսի. — Կարգադրութիւն եկամտից. — Արքեպիսկոպոսութիւն. — Վիճակը եւ պարտաւորութիւն ծխակեր քահանայից. — Հոգեւոր դատաւարան:

Յեօթն Օգոստոսի յետ միջօրէի ես, Երովման և Պետրոս Նիչ դեմ եղեալ յերևանայ չորաք ի մեծահաշակ վանս Էջմիածնի ի Մայրն եկեղեցեաց Հայոց և աժոռանիստն Պաթուղիկոսաց. որ 17 վերստ հեռի անկանի յերևանայ յընդարձակ դաշտի, ընդ մէջ Երարատ և Երագած լեռանց:

Ըստ աւանդութեան Հայոց աստ (Երարատեան գաշտի) էր երկրաւոր եղեմն, և հրաշունչն Երարատ է բոցեղէն սուրն հրեշտակին, որ արգել Երամայ և սերնդոց նորա մուտ գործել ինա. մինչև համատարածն ջրհեղեղ և զբոցեղէն սուրն նորա շիջուցեալ կապտեաց, և զլրախտն քանդեալ աւերեաց. ուստի Նոյի պարտ էր մնալ առ լեռամբն Երարատայ և մարդկային սեպին անտի զկրկնակի ծնունդ առնուլ յաշխարհ: Աստ ետես Նոյ զծիածան հաշտութեան երկնից. և աստ եւ գիտ զքաղցրախորժ ողկոյղ զրախտին և տնկեաց դարձեալ յերկրիս յայմիկ. սմին իրի և սուրբն Գրիգոր նորակառոյց եկեղեցւոյն իւրոյ ետ անուես «Էջմիածին», 65):

(65) Կաթողիկէ Մայր եկեղեցին Հայաստանեայց անունս յեջմիածինն առ յիմանէ Միածնի սրբոյն Աստուծոյ ըստ տեսեան յուսատուն հոգեւոյ մերոց սրբոյն Գրիգորի ի դաշան Երարատեան, որ ոսկի ուսամբ քաղեալ զխորս անդեղոց, հալածեաց զգունդս սանդարմետականաց, և ընարեաց զայն

Յերեկոյն պահու մուտ կալաք ի վանս. այլ չգտեալ անդէն օժեւանս, մեր մեղէն ի խնդիր եւ լիալ, կալաք բնակութիւն ի մերձակայ գեղջն Հայոց, որոց հերասիրութեանն շնորհ մեծ ունիմ:

Այս գիւղ բաղկանայ 360 տանց 66). տունք և այգիք սեպհականութիւնք են բնակաց. միայն հատուցանեն հարկս վանիցն. տուրք իւրաքանչիւր տան յերկու բուբլայց ցեօմն. թուի թէ այս հարկ ժողովի ի պէտս ծախուց վանիցն ի վերայ նոցա, որ ետ փորել ջրանցս և բերել ջուր յօգուտ և ի շահ ժողովրդոցն: Բաշաք պատկանին վանից և հնգորդով ցորենոյ գարոյ և ընտուեալ լինին բնակաց, որք յաւուրց անտի Պարսկական իշխանութեան, իրրե ստացուածք վանիցն, կան մնան մինչ ցարդ աղաթք ի հարկաց մարմնաւորին:

Պարսիկք յոյժ զգուշանան ի ձեռնաւոր լինելոյ կալուածոց եկեղեցեաց Հայոց, մանաւանդ հուսակաւոր վանից *). բաց ի Աղադաշտայտայ Էջմիածինն ունի և զայլ գեղոս, այլ փոքունս և աղքատս. այնպէս զի իւրաքանչիւրոց տուրք հազիւ հազ հառանն ց300 բուբլի — Գլխաւոր եւ

տեղի չիկն տուն և հաճաք Աստուածութեան իւրոյ, և Մայր եկեղեցեաց Հայոց, ուսեալ ճանապարհորդն ոչ զեջմիածնութիւն ուշիմիածինն անուանդ կարաց գիտել, և ոչ զհաւաստի պատճառն այսպէս կուլելոյ:

(66) Այժմ թիւ բնակաց Աղադաշտայտայ անցանէ քան զհինգ հարիւր տունս:

(*) Պարսիկք առհասարակ յարգեն զբարձրատիեան եկեղեցականս փրիստոնէից, մանաւանդ Հայոց. յորժամ Արքայ Միրզա ի ժամանակս պատերազմին իւրոյ ընդ հաճիկս գայ հասանէ յեջմիածին, խնդրէ ի Կաթողիկոսն օրհնել և արել զտաւեր իւր. եթէ պատերազմ նորա լեալ էր ընդ Ռուսս, յայնժամ մարթ էր կարծել թէ քաղաքական նկատմամբ առնէր գայլ. այլ զի ընդդէմ դարձեալ Մահմետական դաւանութեան, յայտ է թէ կրօնական զգացմամբ կամ աւելորդապաշտութեամբ: Այլ ինչ նուազ քան զնոսս և հաճիկք և փութեց յարգանս ընծային սրբութեանց Հայոց: Մահմետականք Պայազիտոյ համարին թէ ի ժանտախտէն, որ ըստ նոցա կարծեաց հանրիւր իմանգամ յետ եօթն ամաց, մարթ է աղաւթի միայն տուրք մասամբ Գեղարդին, որ պահպանի յեջմիածին. զոր յառաջին ժամանակս հանգիսի մեծաւ տարեալ անդանոր, ազատեալք լինին յախտէ վերահոս հիւանդութեանն: Հեղ.

կամուտք վանացն են առատաձեռն նուէրք ժողովրդեանն Հայոց, սիրեղոց յողջոյնն Ասիա, և ըստ մասին յԵւրոպիայ և յԱրիփիկէ յորոց (ի տրոց) հոգացեալ լինին պէտք հոգեւորականաց, տաճարին ծառայողաց, և շինուածք պէսպէս իսկ աւելորդն անկանի ի գանձարան Վաթուղիկոսի (Աթոռոյն), զոր դարձեալ յօգուտ վանացն ի կիր առնուէն:

Ի ծագել տունջեան յայց ելի մեծահամբաւ վանիցն, որ շրջապատեալ էր բարձր պարսպօք և ութն բրգամբք ի մտանելոյ յառաջին պարիսպն, տեսանես կրպակս մանրաւաճառաց, պէսպէս արհեստաւորաց, և գործարան մեղրամոմոյ. երկրորդ դուռն ածէ ի ներքին զաւիթն, ուր և տաճարն է հռչակաւոր. որ ըստ ակներե տեսանելոյ, շինեալ է ոչ միանգամայն և շարունակաբար, այլ ըստ մասին մասին ի պէսպէս ժամանակս, ի զանազան ճարտարապետաց, այն է Բիւզանդացւոց, Գոթացւոց, Վալլիտանացւոց, և նոր-Իտալացւոց, որպէս ցուցանեն ինչ ինչ մասուք շինութեանցն և զարդարանաց:

Ըստ նոր ճարտարապետութեան է մահարձանն Մակտոնայոյ դեպանին Անգղիացւոց առ դրան Պարսից կանգնեալն յամուսնւոյ նորա, և գտանի ի ձախմէ աւագ դրան, ունելով արձանագիր Անգղիարէն, Պարսկերէն և Յունարէն. Եւ այս յայտ առնէ զղիջումն և զմեծ քաղցրամտութիւն Վաթուղիկոսին և հոգեւորականաց, զի ոչ միայն թոյլադրեալ են նմա թաղիլ անդամօր, այլ և կանգնել զայնպիսի մահարձան առ Մայր Աթոռով իւրեանց ի վերայ այնպիսոյ ուրումն, որ ըստ կարծեաց նոցա է Հերետիկոս, Ի ներքս Տաճարին տիրէ մթութիւն, նա և ի լուսապայծառ աւուրա:

Երկայնութիւն եկեղեցւոյն է 50 կանգուն (արշին), լայնութիւնն 48, և բարձրութիւնն 35. ի մէջ Տաճարին թաղաւորէ Բիւզանդիանն ճարտարապետութիւն և խորհրդանկարք 67). յամենայն կողմունս տեսանին արձանադրութիւնք (Հայք սիւնն զարձանագրութիւնս):

(67) СИМВОЛЪ, Symbole. ի Յունական բառէս ս Սիմվոլն և նշանակէ խորհրդական պատկեր, նշանակ իմաստուն կամ լուս ևս տեսչ, իր կամ առարկայ, որ յայլ զաղափառք զվերացականաց. սոսի Սիմվոլ կամ խորհրդանկար ըստ մեր,

Գտանի անդամօր և Թիրեոտեան զանգակ. յորում փորագրեալ կայ Թիրեոտեան իւրհրդաւոր աղօթս "amani", և ըն. զիրք և ձև սեղանոյն և առհասարակ ամենայն կազմութիւն եկեղեցւոյն տարրորդ ի Յունականէն. սեղանն՝ (զԻջման տեղւոյն են լանք հեղինակիս) ըստ աւանդութեան կառուցեալ է ի նմին տեղւոյ, ուր առ կուսպաշտեալ Հինսն զոհարանն էր և արձան Արտեմիտեայ:

Էջմիածին ունի զարդաւոր բազումս յոսկւոյ, յարձաթոյ, և ի քարանց պատուականաց. բայց պարտ է գիտել թէ և բազումք ևս այնք են, որք պահպանին ծածկաբար. Առ աւագ սեղանոյն գտանի նրբաշէն և վայելչաձև աթոռ կաթուղիկոսական զործ Եւրոպիոյ ազնուագոյն, զորոյ նմանն սակաւ երբէք տեսեալ իցեմ. ասէին թէ զայս նուիրեաց ամօք յառաջ մի ի Պապից Հռոմիայ ժամանակից կաթուղիկոսին Եջմիածնի. թէ և զերբն և զհարգն չգիտէին ստուգիւ, բայց համարէին լինել ի վեշտասան կամ յեթմնէտաներորդ զարու. ի մէջ պատկերաց շնչաբեցաւ բնաւ արժանաւոր ուշադրութեան նկարչութիւն. ներքին որմունք Տաճարին գեղազրեալք են ի Հայ նկարչէ ումեմնէ յամի 1736, ըստ Պարսկական տիրօթի բազմէրանդ ծաղկօք. Պատկեր Փրկչին, որպէս յամենայն եկեղեցիս Հայոց և աստ նկարեալ է ի վերայ կուսոյ. զամենէ պէսպէս աւանդութիւնք են յարեմտեան և յարեւելեան եկեղեցիս. յարեմտեանն աւանդի թէ յորժամ Յիսուս Քրիստոս երթայր ի խաչ կրանել՝ վատտակարէկ յերկիր անկաւ. կին մի հրեայ սրբեաց թաշկինակաւ զքրտնամոր երեսս նորա, և սուրբ պատկեր Փրկչական տպաւորեցաւ ի նմա, և այս անուանի պատկեր սրբոյն Վերոնիկեայ (ի Վերոնիկ անուանէ կնոջն): Առ Հայս ալլազգ ի ամենէ պատմի. ի ժամանակս ասեն Յիսուսի Քրիստոսի թաղաւորէր ի Հայս Արգար. սա լուեալ զհամբաւ հրաշից Յիսուսի, հաւատաց ի նա

զս. հաւատարակողմն եռանկիւնն, որ զհաւատարութիւն երեքաննեայ Երրորդութեան սրբոյ յայտ առնէ, և խորհրդանկար. զարձեալ Սիմվոլ կոչի ըստ այլոց ազգաց, հանգանակն հաւատաց զԵրրորդ մ. զտաճանաւորմա զգնաց յամենայն

և զիտացեալ թէ Հրեայք կամին չարարել զնա, հրախրեաց զալ առ ինքն ի Հայաստան, և եթէ ինքն ոչ կարիցէ զալ առաքեցէ զոնէ զպատկեր իւր. Փրկիչն պատասխանի արար, թէ յայն իսկ առաքեցաւ զի չարարեացի և իաշնացի և առեալ զկտան եզ ի վերայ սուրբ երեսաց, և աստուածային կերպարանն տալուրեցաւ ի նմա. զայս պատկեր ետ առաքելոյն հասուցանել արքային, Զայն բան՝ զի ասէ Փրկիչն ՝ Երանի որոց ոչ իցեն տեսեալ զիս և հաւատացեն ՝ Հայք Երգարու աղագաւ դնեն ասացեալ ՝ Բաց յեկեղեցւոյն, այլ ամենայն շինուածք զուրկք են յարհատէ հմուտ ճարտարապետութեան:

Ելեալ յեկեղեցւոյ, չորաք ի կաթուղիկոսարանն, որ արտաքուստ չէ նշանաւոր ինչ շինութիւն, անցեալ ընդ նախասենեակ, որ է միաեղամայն և զաշիճ, մտաք ի միւս սենեակն, և զարմանք ոչ սակաւ կալաւ զիս, յորժամ՝ տեսի անդանոր զնորոպական կահ կարասիս, զմեծ հայելիս, բազմոցս, ամթոս և սեղանս, թէ և ոչ նրբաշէնս — Կաթուղիկոսունք Հայոց, նա և ծերունադարձքն ի նոսա դհտ աւորութեան ժամանակին ընթացեալ, թողարտեն եւրոպական ձեռք ի ներքս ի տունս իւրեանց մտանել, ոչ այսպէս և պապք Հռոմայ, որոց ընակարանք տեսանին միշտ անպաճոյճք և հոի յամենայն զարգարանաց, որպէս սովորաբար առանձնարանքն են միանձանց:

Ոչ զք փոյթ կալաւ զմենք կամ ուղեկցեաց ի շրջիւ մեր ի վանսն. միայն յետ ընդերկար զիմադրութեանց ետուն մեզ հազիւ օթեւանս ի հանգչել. չեսցին և զլուսն մատենադարանին, պատճառելով զկորուստ բանալոյն. այլ ասկայն երեւի թէ մատենադարան տեղւոյս չէ այնչափ հարուստ. յամի 1836 կազմեցաւ ցուցակ գրոց նորա և ի լոյս ընծայեցաւ ի լեզու Գաղղիական ի ձեռն ձեմարանականին Ռուսաց (ակադեմիք) Բրոսսէի. ըստ նորուն՝ թիւ Հայ գրեւոյն հասանէր 9500, յորոց իննսուն և մին պատմաբանականք 68):

Էջմիածինն և Կաթուղիկոսն ունին զմեծ աղ- ղեցութիւն ի վերայ աղգութեանն և միութեանն Հայոց. Էջմիածինն է կեդրոն, ուր եկեալ ժողովեալ բազմութեանց Գանդէտի, յեղեցոյ նեղոսի, եփրատայ, Եթեւայ (Վոյկայի) և Նեպայի, ծաւոթմանն և մտերմական բարեկամութիւնս կապեն ընդ միմեանս: — Ըմենայն կողմանքդ այգութիկ պարտին զալ տանել Էջմիածնէ զսուրբ միւսուն, զոր օրհնէ միայն Կաթուղիկոսն. վասն որոյ միշտ խոստովանի և պահպանի միութիւն աղգային եկեղեցւոյն իւրեանց:

Ի նմին տեղւոյ, ուր այժմ Էջմիածինն է, 600 ամբք նախ քան զծնունդ Բրիտտոսի էր նշանաւոր քաղաքն Հայոց Արտեմէտ՝ յանուանէ կոոցն Արտեմիտ կամ Լանահիտ:

Վաղարշակ մի ի հռչակաւոր թագաւորաց Հայոց և հիմնադիր Արշակունեան թագաւորութեան՝ արար զսա մայրաքաղաք տէրութեանն Արշակունեաց՝ պատեաց պարսպօք և անուանեաց նոր Բաղաք 69) ըստ ասելոյ Փոստոս Բիւզանդայ:

և զնանաւորութենէ նոցա. բայց չիք տարակոյս, թէ ի մէջ անհրատարակեալ ձեռագորց պատմական մասին որմեք անգնանառելիք են, թերեւ ամբողջ ըստ ամենայնի, բայց զայս երեւելի բանգարան Հայկեան գրականութեան փոյնի և որդունք ծախեն և սպասեն անխնայս. Շոպեն երես, 918:

Գոհութիւն Աստուծոյ, զի այժմ պարգեւեա զստանութեամբ կարեմք ասել թէ մատենադարան Ս. Էջմիածնի ի 1861 ամբ հետէ բարեկարգեալ և ի վայելուչ կանոնաւորութիւն տեղալ է ընդիւք քանի մի ժառանգաւորաց Ս. Էջմիածնի. թէ և ոչ առանց ակոստանաց ասեմք թէ մինչ ցարգաւորութիւնն արդէն ձեռք առաւարարայք և անխիղճք մեծ հարուստ ետուն մատենադարանին, որ միակ պարծանք կարէր համարել Ս. Աթոռայն և աղբի. գիտեմք թէ զարդիս իսկ քանի քանի հատ ընտիր և հազուադիւս ձեռագիրք յոմմէ՞ զողացեալք ո՞ր և տո ո՞վ գտանին, այլ ո՞վ արդեօք հոգ կալաւ ի ձեռս քերելոյ զնութիւնս Աթոռայն, զայս այլում ժամու և ժամանակի պահեալ խօսելոյ, աստացոյք առ տեղեւան թէ կազմեալն ի Բրոսսէի ցուցակ գրեւոյն Մատենադարանի Ս. Էջմիածնի պարունակէ 91 պատմաբանական գիրս, իսկ ըստ ցուցակին ի լոյս ընծայելոյ ի Տփլիս յամի 1863 երեւին միայն եթանասուն վեց պատմաբանական գիրք և երեսուն Աստուածաբանականք. Շոպեն ի վեր անդս որպէս ասացաք, զթիւ ձեռագրաց զնէ 307. իսկ ի յիշեալ ցուցակին ի տեսանել զթիւ բուրից, 2340, չգիտեմ Շոպեն զտեսանել ընտիր գրոց արդեօք:

(69) Զայս քաղաք հիմնեաց Երուսաղ աքայ Հայոց, և ընդարձակեալ քորցոյց Վարդգէս մանուկ Տուհաց, որ ըստ խո-

(68) Պ. Շոպեն զնէ զթիւ ձեռագրաց մատենադարանինն Էջմիածնի 307. որոց վասն խօսքի և Կարենակութիւնք յիշեալ 307 ձեռագրոց տակաւին չունին զհիւս հետազոտութիւն, ուստի չկարեմք գիտողաբար և որոշակի ինչ ասել զկարենորութենէ:

յորժամ Սասանեան Հապուհ Բ. աւերաց զԱ-
ղարշապատ, տունք էին ի նմա 1900): յետ ա-
ւերանացն դարձաւ գիւղ մի, որ և ցայժմ կոչի
նոյն անուամբ: Ի տեղւոյ մէջնին մեծն Տրդատ
և սուրբն Գրիգոր կանգնեցին զառաջին եկեղեցին
Քրիստոնէութեան և անուանեցին « Էջմիածին »:
այս քնքն էջ Միածինն ի 529 թուականէ 9618,
եկեղեցին էր աւեր. մինչև Ամիրտաս Վաթուղիկոս
վերստին նորոգեաց զայն. նա շինեաց սրբատաշ
քարամբք և զմեծ կաթուղիկէն: — Յամենայն
ժամանակս եղեալ են ի նա յաւելածք շինուա-
ծոց. վերստին խիստ աւերումն եղև ի Հաճ. Ա-
բասայ և նորոգեցաւ յամի 1629, որ կայ մնայ
մինչ ցարդ. ի 1446 ամէ Էջմիածին եղև Հա-
տատուն քնակարան Վաթուղիկոսաց:

Միանձունք Հայոց բաժանին յերկուս կարգս.
մինն միանգամայն մերժէ զաշխարհ, և ըստ Աս-
տուծոյ կալով առանձնանայ ի մենաստանս զօ. ի
Աւան և շն. ուր զխաղաղ և խոտակեաց վարեալ
կեանս՝ յոյժ յարգիք են առ ժողովուրդս. միւս
մասն ջանայ և նկրտի Հասանել Հոգևոր մեծամեծ
աստիճանաց իշխանութեան և պատուոյ:

Ամօքք ինչ յառաջ ընտրեալ էր ի Վաթուղի-
կոսութիւն Արքեպիսկոպոսն Ներսէս. բայց ի իւ-
նելս իմ Եջմիածին ոչ գտանէր նա անդէն, զի
կայսրն կամելով անձամբ տեսնել զնա, հրաւիր-
եալ էր ի Պետերբուրգ. և գտեալ այլ գործուն-
եայ, հանձարեղ և իրաւաւեո՛հ, ոչ միայն Հաստա-
տեաց զնա իշխանութեանն, այլ և պատուաւոր-
եալ մեծարեաց. իսկ ես ի ձմրան 1843 ամէ 91844
ամն գոլով ի Պետերբուրգ, դէպ լարեպատեհ զտի
ինձ ծանօթանալ ընդ նմա Գնդադետ Վ. . . որ
զմտերմութիւն ցուցեալ էր Ներսիսի ի ժամա-
նակս պատերազմին Ռուսաց ընդ Պարսիկս, տա-
րաւ զիս առ նա ի տուն Տ. Լազարեանց. ել ընդ
առաջ մեր եօթանասնամեայ տըղարդս սպիտակա-
փառ, փոքրահասակ ծերունի, որոյ կերպարանն
յայտ առնէր զհեղուծիւնն, զկորովամտութիւնն,

և զդարեմտութիւնն. զգեցեալ էր սեռս վերար-
կու կրօնաւորական, միայն խաչ ազամանդեայ
փայլէր ի վերայ վեղարի նորա. գիտէր միայն
զՌուս լեզու. ուստի թարգման մեր եղև Պ. Վ.
յետ սովորական ողջունի յարգանաց, պէտպէս
հարցմունս և խօսս ի մէջ առի ի վերայ աղղին
Հայոց, Վաթուղիկոսն իմացեալ թէ սիրով ան-
կեղծօրէն կամիմ գիտել զնեղքին միճակ և հան-
գամանս դրութեան համաստեղիցն իւրոց, յայտ-
նեաց զուրաբոութիւն արտի իւրոյ, և խօսեցաւ
ընդ իս մտերմաբար. ի նոյն իսկ երեկոյ զամենայն
խօսս նորա ի զիր առի, և ահաւասիկ աստանոր
թողեալ ի բաց զպէսպէս հարցմունս իմ, հա-
տուածօրէն, բայց խնդութեամբ յառաջ բերեմ
զբանն կաթուղիկոսին:

Էջմիածինն կառուցեալ է յամի 305. Հոռու-
մայեցւոց տիրէր յայնժամ Գիսկղեախանոս, և Հա-
յոց Տիրամն*). ստորերկրեայ լիճն ի ներքոյ Տա-
ճարին, արտաքին որմն եկեղեցւոյն, (չէ յայտ
զոյմէ են բանք) գործք ժամանակին այնորիկ,
մնան տակաւին. նոյնպէս և կարմիր քար մի ե-
ղեալ ի միւսմ ի կամարաց եկեղեցւոյն, որ յա-
ռաջ գտանէր ի մէջ աւերեալ կամարի միւսմ:

Նախկին շինուածք եկեղեցւոյն ունէր զկամար
սաղալանք, յորժամ նայն խախտեցաւ, շինեցին
ոչ դարձեալ ըստ առաջնոյն, այլ ի վերայ նորա
կաթուղիկէ Բիւզանդեան. յայտ է թէ կոչեցան ի
սոյն գործ ճարտարապետք ի Վ. Պօսոյ և այս թուի
լինել հազար ամօք յառաջ քան զմեզ:

Աթոք՝ որք գտանին յեկեղեցւոյ ի ձախմէ
սեղանոյն՝ ընծայեալք են ի Պապ Բնովկենտիոսէ
Բէ. յամն 1697. — 1699, ժամանակակից Վա-
թուղիկոսին. ի սմին ժամանակի եկեղեցականք
Հայոց և Վաթուղիկոսն ի պատճառս չարամիտ
քարոզչացն Լատինացւոց թշնամաբար շարժէին
ընդ Պապն. Վաթուղիկոսն առ ի կարճել զայն-
պիսի թշնամութիւնս, խնդրեաց առաքել ի Հոռու-
մայ զայր մի խոհական, առ ի յայտնել ի ձեռն
նորա զվրդովմունսն յարուցեալս: Պապն առա-

բնեացոյն ու եկեալ նստեալ զերեզ բլրով կռել կոփել զգուռն
Երուանդայ արքայիս. իսկ Վաղարշապատ կոչեցեալ և նոր
քաղաք ի Վաղարշեայ արքայէ, որ պարսպօք պատեալ և չքե-
զացոյց:

(*) Երեկ թէ Վաթուղիկոսն չփոքեաց զանուանս ընդ մի-
մեանս. զի ի նմին ժամանակի Թաղաւարէր ի Հայոց Տրդատ
Գ. մեծն, որ ընկաւաւ զգրխտանեականն կրօն յամի 303:

քեանց զՓատեր Խաչատուր ի կարգէ Փրանկիսկեանց, ի ձեռն նորին՝ զընծայս Կաթուղիկոսին, ի թիւս որոց և զաթոռան. Փատեր Խաչատուր աշխատ եղև արկանել խաղաղութիւն ընդ մէջ Կաթուղիկոսին և Հոռովմայ:

Պատրիարքունք Հայոց Երուսաղէմայ և Պաշտոյ կրեն միայն զտիտղոսն, այլ ոչ զիրաւունս Պատրիարքութեան. զսոսա զԵրուսաղէմայ երկուսք կարեն փոխել յիշխանութենէ Կաթուղիկոսն կամ ազգն, իսկ Կաթուղիկոսունք անփոփոխելի են մինչև ցմահ, իրրե օծեալ Տիառն*):

Եկեղեցին Հայոց խանարհամա է յոյժ և բարեխրատ. զամենայն որ, որ միանգամ մկրտեալն է, ճանաչէ և խոստովանի Քրիստոնեայ, և տայ նոցա ի պահանջին զօրհնութիւն և զհաղորդութիւն, առանց պահանջելոյ ի նոցանէ ընդունել զվարդապետութիւն եւր. ևս ինքնին հաղորդեցի յԵրեւան զերկուս Հոռովմապաւան քրիստոնեայս, որք հանգերձեալ էին զմահ ճաշակի:

Հայաստան յընթաց դարաւոր ժամանակաց եղև թատրոն արիւն ճնշութեան և մեծամեծ սարսափելի պատերազմաց. հէգ ժողովուրդն և եկեղեցին նորա տանջեցան տրորեցան և տաղնապեցան միշտ յերեսաց Պարսից և Տաճկաց, երկու հարիւր ամբ են յորմէ հետէ ակնպիշ կայսր օգնութեան Ռուսիոյ:

Յորժամ իրրե փոխանորդ և հաստատրիմ Կաթուղիկոսին Եփրեմայ գտանէի ի Պայազիտ, քարոզիչք Անդրիապետոյ որք ի Հինտս, առաջի արարին ինձ բանս միութեան եկեղեցւոյ ընդ նոսաւ որք և կամէին բանալ դպրոցս ի պէտս Հայ մանկանց ընդ խնամով և պաշտպանութեամբ Անդրիապետոյ և Հիւսիսային Ամերիկացւոյ, որով

ազդ Հայոց համօրէն ընդ հովանաւորութեամբ լինէր Անդրիոյ, այլ ես ոչ յանձն առի, երկուցեալ թէ մի արդեօք մնասեցից զեկեղեցի իմ:

Ազդ իմ չէ քաղաքակրթեալ. բայց ունի զմեծամեծ ձիրս բարեմասնութեանց. յոյժ կանխազգաց նա զպէտս դպրոցաց, ի ծաւալումն լուսաւորութեան, ես ի մտի եզի կանգնել ի Տփլիս զվարժաւան 800 աշակերտաց, և այս նպատակ իմ եզիտ յազգի իմում՝ քաջալերութիւն մեծ, մինչ զի ոչ յետ ընդերկար ժամանակի ժողովեցան 400 մանկտի:

Սոյնպէս կամ էր ինձ կառուցանել ի Ս. Էջմիածին ի ծոց մօրն եկեղեցւոյս իմոյ զմեծ վարժաւան ի դատարարակութիւն որոցոց Հայոց սփռելոց ի համօրէն կողմնու աշխարհի, և առ նմին ճեմարան հօգեւոր և արտաքին պիտութեանց:

Հայք ցրուեալք են ի հեռաւոր կողմնու, և բազմութիւ են յոյժ. ասի թէ Հայք համարին մինչև 15 միլիոն անձնք. ըստ իս սխալ է պոս թիւ, միայն կարիմ ասել հաստատութեամբ թէ թիւ Հայոց անցանէ քան զու թիւ միլիոն 70): Հայք՝

(70) Ստոյգ թիւ Հայոց սփռելոց ընդ զամաղան ոլորտս երկրի տակաւին լառաւ ի ձիւտ հաշիւ, բայց անմարթ է խոստովանել զթիւ նոցա պակաս քան զհինգ միլիոն:

Վիկտոր Լանկուայ զնէ լորս միլիոն հազի բաժանեալ այսպէս, ի Տաճկաստան տեսել ընդ նմին զեկեղեցւոս և դիւանաբեան իշխանութիւնն	2550000
Ի տէրութեան Ռուսաց	1220000
ՅԱւստրեայ տէրութեան	25000
Ի Պարսկաստան և Աւստրիան	170000
Ի Հնդկաստան և ի կղզիս Ասիայ	25000
Յարեմոնեան Եւրոպայ, յԱմերիկայ և շն	10000

Դուսմարն 4000000

Տես՝ "Les Armeniens de la Turquie V. I-er, 1863 p. 4.

Շուրջն ասէ, ըստ այլ հաշիւոյ այժմ համարին 1500000 գերդաստան ընդ իշխանութեամբ Կաթուղիկոսին Եթիօպիան, 20000 Սայ, ընդ ամենն 1520000 տան կամ 7,600000 հազի, բայց այս թիւ առաւելեալ է և ընդհանրապէս չի մարթ կարծել թէ թիւ Հայոց նոյն իսկ ի Ժողովեալ ժամանակի Թաւաղութեան նորին տաւաւաւ երբեք քան զվեց միլիոն, այժմ թիւ Հայոց ընտկելոց ի զանազան կողմնու երկրին հապիւ անցանէ քան զերկուս միլիոն անձնս. եր. 18:

Ուսեալ աշխարհագիրն կրկնակի սխալ գործէ ակն յայտնի. նախ զի թէ և յոյ մի պատմութիւնս նշմարեմք զյատկացեալ

(*) Սակայն պատմութիւնն յայտ յանդիման ցուցանէ թէ, ծայրագոյն իշխանութիւն Կաթուղիկոսաց ոչ միշտ և միակերպ տարածեցաւ ի վերայ Հայոց. Պատրիարքունք Եթիօպիան յամէ 1655 յ1680, ևս և Վ. Պաշտոյ, երբեմն կացին անկախ իշխանութենէ Կաթուղիկոսաց (") գտանի մինչ ցարդ ի Սիոն կիլիկիոյ Պատրիարք, որ անուանէ զանձն ու կաթուղիկոսս և ոչ հպատակէ Կաթուղիկոսին Եթիօպիան, զայս յառաջ բերելով փաստ թէ, նախաթաւ Կաթուղիկոսաց էր Սիոն մինչև յ1441 ամն. անկախ է նոյնպէս և Պատրիարքն Աթամարայ, բայց երկուքն սաքա համարին սպորթնիքս: Հեղ:

վարդապետն պատրաստել զնոսա վանն աղագային, զի եղիցին արք առարինիք, ուսեալք և արժանիք համադասելոյ ընդ մեծարոյ հայատակս կայսեր Ռուսիոյ)։

Այս այր բարեհաճ կառոյց և զգործարան ապակոյ ի շրջակայոյ Տիխոնոյ։

Ի պատճառս բաղմնադրմի տառապակրութեանց յերեսաց Պարսից, Վաթուղիկոսն Եփրեմ ստիպիցա լծողու զԵմիածին, և Ներսէս վարեաց զիշխանութիւնն հանձարովն և եռանդեամբն։

Ի ժամանակս պատերազմին Ռուսաց ընդ Պարսիկս, էր և անգամ ժամանակաւոր, յանձնաժողովոյն հաստատելոյ ի կառավարութիւն գործոց նպատարցիկ երկրին 73)։

Յամի 1828, Ներսէս կարգեցաւ առաջնորդ Բեաւարելոյ և ամբռանիստ իւր եղև Քիչնև, որ

(73) Զարմանք, զի ի մէջ ոչ ոք տակաւին փայթ յանձին կայս, ի քեր առնել զգնեսագրութիւն աշխարհագրական անմահանուն Հայրապետի, մեծին Ներսիսի Ե. Թէ իցեն իսկ սակաք ոմանք, որք ընդ քրով արկեալ իցեն, գտնէ զայսլայի ժամանակս յերեսն չէ վատակ նոցա. որչափ պարտարակելի տնտեսութիւն և անասնոցութիւն — Թող պիտեա, և զշահեաւորութեան օրհնագործարգոյ, ի մասնաւորի կարգէ զգնեսագրութիւն երջանկայիշատակ Հայրապետի մերոյ և Dictionnaire universel des Comtemporains par G. Vaperean, Paris 1865. այսպէս. ոչ Ներսէս կամ Նարեկ Եանաչիգեան, ծայրագոյն Պատրիարք (Վաթուղիկոս) Հայոց ծնեալ յամի 1770, յԱլաբաքի, առ ստորոտով լերինն Արարատոյ ի միոյ ի հին և Նշանաւոր տոմարց երկրին, սկզբնաւորելոյ ի Եանաչիգոյ, ուստի և գանունն առ։

Ի տասնութներորդ ամի հասակին առաջեցաւ ի Մայր Աթոռն Հայոց Եմիածին առ հաւն իւր Արքեպիսկոպոսն Գալուստ, ոմանի ապա և ի Կ. Պոլիս, որ եկաց զամս երկուս. քարձ արարեալ յԵմիածին Աեռնադրեցաւ վարդապետ, զկնի և Եպիսկոպոս, և վարեաց զընտիր ընտիր պաշտօնս, յորս յաջողակ և եռանդուն երեւեալ, յամի 1811 քարքեպիսկոպոսութիւնն ետա Տփլիսեաց. անդ կացեալ զամս 17, նուիրեաց զանձն ի հատարումն խորհրդոցն, զորս բազմաք յառաջ երկներ ի վերտին նորոգութիւն Հայաստանի. ի մասս զորմեքն իւր ի Տփլիս, իսկ և իսկ հիմնեաց անգամօր զգործոց մի նախակրթական, յորում ի փայթ ժամանակի ժողովեցան մինչև 400 աշակերտք. կառոյց և զնոցնոր զպրոց (séminaire) ի պէտս գեղահաս մանկեանց, պատրաստելոյ ի քաջանայութիւն. և զաղջային ուսումնարան ընդ անասնաբն ոչ Ներսէսեան Գործոցն քնդ նմին և ապարան, որ ամի ամի ի լոյս բնծայե

եկաց անանձնացեալ զամս բազումս, նուիրեալ զանձն ի բարեկարգութիւն վիճակին. այլ ազգն ոչ մոռացաւ զնա, և աչք ամենեցուն ի ծանապարհս նորա յառեալ կային Ա. ինչ բով մաս հուան Վաթուղիկոսն Եմիածնի հասանել, և բան զընտրութենէ ինէր նորոյ Հայրապետի, ազգն համօրէն սկսեալ յափանց Գանդէսի ցեղերս Նեփալի, և ի Վարպատեան յերանց ցիմանուս միաձայն զՆերսէս կարգացին. «ցորչալի կենդանի և Ներսէս, աղադակեցին ամենեքեան, այլ որ ոչ կարէ զաթոռ ունիլ սրբոյն Գրիգորի»։

Առթիւ ընտրութեան Ներսիսի, կամիմք ի մէջ բերել ատանօտ գրանի մի տեղեկութիւնս զընտրութենէ Վաթուղիկոսաց Հայոց, Ա. անդէ պատմութիւնն Հայոց, թէ զկնի Համարաձման Փրկչին

բազմութիւն ընտիր քրեանս, ապա զայ ի վերայ վաճառահանութեան և արհեստից զարձացեալ կառոյց մեծապէս պոնդակ (քարվանսարայ), հաստատեաց արուեստարանս առնեգործ նկարաց, միեկանոց և Նշ։

Այսպէս ջան և եռանդ նորա կատարեց ի կացոցն զնա հակառակ ծառայութեանն, զորս եղոյց . . . ի վերին պատերազմին ընդ Պարսիկս. յորում ժամանակի զընտրել և տալիքեաց հանգիստեացեալ Հայ գորակոմսոցն խալ ի Աեռին, խորտակեալ ի բաց վանեաց յերկրէն 150,000 այրս մարտադիրս. վասն որոյ յԱրքեպիսկոպոսութեան Քիչնևի ի Բեաւարապիս, յամի 1828, Ներսէս զամս հեգետատն եկաց յատարութեան. այլ ազգն ոչ երբեք մոռացաւ զնա. զկնի մահուան Յովնանու Վաթուղիկոսի, Սինթոն, ընդ նմին աշխարհակոն և եկեղեցական պատգամաւորք ամենայն վիճակաց Հայոց ժողովեալ յԵմիածին, ընտրեցին զնա յաթոռ Վաթուղիկոսի յամի 1843, յԱպրիլ ամսով։

Նախ քան զհաստատութիւն ընտրութեանն կայսրն Ռուսաց կամեցեալ տեսանել զՆերսէս, կոտեաց զնա ի Պետերբուրգ. որոյ գնացեալ առ նա ի յաջորդ միտանն, քանիցս անգամ ներկայացաւ կայսեր, որ ոչ միայն հաստատեաց զնա յիշխանութեանն իւրում, այլ և պատուովք մեծարեաց — Ներսէս քարձ արարեալ յաթոռն իւր Եմիածին յամի 1844, եգիտ անդ զՍինթոն, բազկացեալ յինն Արքեպիսկոպոսար։

Հաջևոր իշխանութիւն նորին (Ներսիսի) տարածեցաւ ի վերայ ամենայն եկեղեցեաց Հայոց ի Ռուսաստան, ի Տաշկանստան, ի Պարսկաստան, և մինչև ի Հնդկաստան։

Յամի 1856 հրաւիրեցաւ ներկայ գտանել ի Մոսկուս ի Թագադրութեան կայսեր Աղէքսանդրի Բ ի. այլ ի պատճառս ծերութեանն, և զի երիցս ներկայ գտեալ էր, մի ի Թագադրութեան Նիկողայոսի յամի 1826, մի Աղէքսանդրի Ա. յամի 1822, և մի Պողոսի Ա. յամի 1797. Թայլ չեաւուն նմա զնա։

յերկինս, վաղվադա՛ր թաղէս առաքեալ մի յեթմանանից (°) եկեալ յԵփեսիա մկրտեաց զարքայն Հայոց Արգար և զայս բազումս. այլ որք զկնի նորա թագաւորեալք, վերստին կռագաշտեցան, և քրիստոնէութիւնն հազիւ պահպանուի ի նոսա. մինչև սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, որ ի ցեղէ Արշակունի թագաւորաց, եկն ի Հայաստան կրեաց ազգի ազգի շարշարանս, և քարոզեալ զՄեծաւարանն, դարձոյց զազգն և զմեծն Տրդատ արքայ ի Բրիտաննութիւն. և եղև հիմնադիր եկեղեցւոյն Հայոց. ուստի առաքեալ Հայոց ասացաւ և պատուի յոյժ*): Եպիսկոպոս էր սուրբն Գրիգոր և Պապն Սեղբեստրոս ի չորրորդ դարու ձեռնադրեաց զնա անձնիշխան Վաթուղիկոս Հայոց (74): Վաթուղիկոսունք որոյ Աթուոյն Էջմիածնի հաստատեն թէ, իշխանութիւն և կոչումն նոցա շարունակաբար յամենայն դարս ժամանակաց իջանէ յաշորդութեամբ ի Ս. Գրիգորէ, վասն

որոյ ի սկիզբն ամենայն բանից իւրեանց օրհնութեան, պարծանօք յիշեն ցարսանեալ աշոյ նորա՝ որ պահպանի յԷջմիածին:

Պատրիարք Վաթուղիկոսն Էջմիածնի ճանաչի պուխ եկեղեցւոյն Հայոց. նա միայն ունի զիշխանութիւն օրհնելոյ զմեռուն, և կարգելոյ զեպիսկոպոսունս ի հովաւութիւնս վիճակաց. նա հսկէ ի վերայ եկեղեցական գործոց, կրօնի, բարոց և ընդ նա միայն կարէ ներել զյանցանս որ ընդ գեմկանանց եկեղեցւոյ, և յամենայն պաշտամունս ժամերգութեան յիշի անուն նորա. որչափ կրօնական գրեան լինին ի Հայ լեզու, ընծային ի լոյս հրամանաւ նորա. և նա հպատակէ կանանց ժողովոցն թէ տիեզերականացն և թէ ազգայնոցն:

Վաթուղիկոսն միայն օրինական ընտրութեամբ կրել կարէ զայս տիտղոս. յառաջին ժամանակս, այն է յառուս թագաւորացն Հայոց ժողովին յընտրութիւն նոր Վաթուղիկոսի յեկեղեցական և յաշխարհական կարգէ, և համաձայն հաճութեամբ որոշէին զոմն ի նոյն պաշտօն (իրենմ ընտրեալ լինէին «per acclamationem» . ի վերջին ժամանակս թուլացաւ ազգեցութիւն աշխարհական մասին. ընտրութիւնն յանձն լինէր եկեղեցականաց, բազում՝ անգամ միայն միանձանց, բայց դարձեալ ժողովուրդք թէ նուազ թէ աւելի, մասնակից լինէին ի նոյն, մասնաւանդ ի վերջին ժամանակս (75):

Մարմնաւոր կառավարութիւնն միշտ յիրաւունս էր ընդունելոյ և հաստատելոյ զՎաթուղիկոսն. և

(*) Եւ Վերք յարգանօք ընդունեն զսուրբն Գրիգոր, և պնդեն լինել առաքեալ իւրեանց. միայն առ նոսա միանգամայն օտարտի աւանդութիւնք են զսրբոյն, որպէս երեւի, սոքա բանակութիւն լինին ընդ Հայս սեպհականեկեղեցւոյ ինքեանց: Էջմ.

(74) Օտարտի միանգամայն և անտեղի կարծիք. թէ սուրբ Լուսաւորիչն ի Սեղբեստրոսէ ընկալաւ ձեռնադրութիւն եպիսկոպոսականութեան:

Չայս կարծիս արժարժեցին թէն և ոմանք ի աշխույժ մեծայնոց, այլ հմտագոյնք միշտ մերժեցին և մերժեն. զի սուրբն Գրիգորիս ընկալաւ զստեփան քահանայապետութեան ի Գեղարեանց Պատրիարքէն Կեսարիոյ, յաղորդէ Առաքելոյն Հայաստանեայց Թագէի, որում յայտնապէս վկայեն և պատկառելի պատմիչք Ազգիս Ազաթանգեղոս ժամանակակիցն և զիւսանդայրն Տրդատոյ մեծի. միշտ քահանայապետ տնտանէ զսուրբ Հայրապետն մեր նախ քան զգնալն ի Հռովմ, թէն երթն ի Հռովմ չէ տակաւին պատմաբանական աղանցացութեամբ վկայեալ:

Չայտմանէ սակաւօք միայն յիշատակեալ կամեցայ ազգել ընթերցողիդ զիւսալ կարծիս քայս, որ ցարդ թէն ոչ սակաւ բանակութեանց նիւթ եղեալ, այլ միշտ մերժեցաւ, և զատապարտեցաւ. իսկ թէ քո կամք եղեն լուսապէ իրացն հասաւ լինելոյ, զպատմութեան մեր արժանաւորաւոր առաջի առնելք քեզ ընթեռնուլ և զսէրքումն գաշանց թղթոյնս Կարապետ բաղմանաւ և արգիւնաշատ վարդապետի Շահնազարեանց Մեծ յօտարութեան ոչ զպատմութեան ունիմք առաջի ալաց, և ոչ ժամանակ զանէն յեղարձակ քննութիւն և մերժումն կարծեացք տալոյ:

(75) Ընտրութիւն Վաթուղիկոսին ամենայն Հայոց և օրինաւոր Պահակալի որոյն Գրիգորի ի սկզբանէ հետէ լեալ է և պարտի լինել համապային մասնակցութեամբ, այն է հաճութեամբ եկեղեցական և աշխարհական կարգաց. եթէ երբեմն երբեմն եղեն ազգրինաւորութիւնք, ըստ մեծի մասին յորժամ ողորմելին Հայաստան ի դաւանադատ վիշտ և նոգեապառ գերութիւնս անորն բանակալաց լքեալ չուարեալ կայր, զո մերթ ժողովրդականք միայն ընտրէին զկաթուղիկոս, մերթ եկեղեցականք, մերթ ևս այլազգի բանակալք, և ընդ համարին միայն բացառութիւնք, և պահանջուած անգութ ժամանակին. իսկ այժմ որովհետեւ Ազգ Հայկեան շնորհն լուսաւոր և խաղաղարար ինքնակալութեանց վայելէ զանդորութիւն, և տեղ է իրաւանց իւրոց, չէ օրեն անտարբեր հայել ընդ այս նախնաւանդ սովորութիւն:

իրաւամբ է այս, զի յորժամ Հայք ունէին զմարաւոր, ի մասնակցել ամենեցուն յընտրութիւն՝ անհնարին է ասել թէ ոչ մասնակցել և թագաւորն, և զի նա պահպանէր զկաթուղիկոսութիւնն, հարկ էր և նմա հաստատել զնա 76). այլ այս ամենայն կարգ փոխեցաւ. յորժամ Հայաստան հպատակեցաւ Մահմետականաց. արտօնութիւնք և իրաւունք միջոցք եղին մեծամեծ շարարուեստ հնարից, և Կաթուղիկոսական աթոռն Էջմիածնի նիւթ շահուց, զոր հրապարակական գնահատութեամբ վաճառէին Պարսիկք. այսպէս ընտրութիւն Կաթուղիկոսի գտաւ նախ ընդ աղղիցութեամբ աշխարհական իշխանութեան աղղին, ապա Մահմետականաց մինչև ցկէս շըրջան ժ.Ը. դարու, իսկ այնուհետև աղղիցութիւն Ռուսիոյ հետզհետեւ երևեցաւ ի նոյն. այլ հարկ է խոստովանիլ թէ առաւել բարորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ պատճառ եղև, որ յայնմ օրէ փոքր առ փոքր եզիտ զինքնազոյութիւն իւր, պաշտպանութեամբ նորուն ազատեալ ի ձեռաց Պարսից և Տաճկաց:

(76) Առթիւ յիշատակութեան անուան Կաթուղիկոսութեան կամիմ կարգել աստուծո համաձայն ինչ տեղեկութիւն զհաջիսէ օժման Կաթուղիկոսաց Հայոց ի նախկին ժամանակս յաւաքս թագաւորացն մերոց. Թէև ցանկալի էր ի բուն իսկ մեաքիւր Մաշտոցաց մերոց առեալ կարգել, այլ զի անագորոյն ժամանակն երբեք յանձն չէառ լցուցանել զայս մեր փափագ, ուստի ի Շապուհայ լուեալ երկրորդեմք աստէն և զու թերեւ զարմացիտ, զի ասացի թէ ժամանակն չեա մեզ զբազմալին մեր միշկեա. ի տանտաժեայ տիոց հետէ անեալ և զարգացեալ եմք ընդ մայրական գթաւաստ խնամովք Սրբոյ Աթոռոյն Ելմիածնի, զճոխ մատենադարան նորա միշտ առաջի ալաց ունելով: զայլ և թէ ախորժես տուր ծաւաթեան մերոյ և անհագաթեան, միայն լուր զոր յիշատակեալ ճանապարհորդն յառաջ բերէ որ է այս. « Ի ժամանակս Թագաւորացն Հայոց օժման Հայրապետաց կատարելի այսպէս. ի նշանակեալն յարգայէ աւուր և ժամու, ընտրեալն ուղեկցութեամբ երկոտասան Արքեպիսկոպոսաց քանի մէկ Վարդապետաց Քահանայից և Սարկաւագաց երկայս ի Սայր Նկեղեցին ի կատարել զնախընթացն հանդիսին պաշտօնուն. յետ սակաւուց քայլ և թագաւորն ամենայն աւագանեալն և արքունի զբամբն ի նոյն եկեղեցի, որում ընդառաջէր ցուրս նորընթիւ Հայրապետ և Թափորիւ մեծաւ ամէր զնա յաթոռ Արքայական եղեալն հանգեալ մեծի սեղանոյն, յետ կատարման ինչ ինչ աղօթից երեք անմիջ պատգամաւորք յեկեղեցականաց և աշխարհականաց ա-

նախ զառաջինն Կաթուղիկոսն Ղուկաս խընդրեաց ի տէրութիւնէն Ռուսիոյ զհաստատութիւն ընտրութեան իւրոյ, և ընկալաւ զայն 30 Յունիսի 1765 ամի. յաջորդ նորա Գալիթ (հեղինակն սխալմամբ եղեալ է յաջորդ Ղուկաս միւս ևս Ղուկաս) ի 28 փետրուարի 1798 ամի. յետ այնորիկ աղղիցութիւնն Ռուսիոյ այնքան զօրացաւ, մինչև իշխանագնեայ Երկայնարագուկ Երզուրիւն Յովսէփ Եպիսկոպոս որ բնակէր ի Պետիրուրդ հաստատեցաւ ի կաթուղիկոս ի կայսերէն Պողոսէ 30 հոկտ 1800 ամի. — Կաթուղիկոսն Գանիէլ յամեն 1802, — 1809, և Եփրեմ 1809 — 1831, ընտրեցան բացարձակ աղղիցութեամբ Ռուսիոյ:

Հայք ընկալան զՌուսս ոչ իբրև տիրապետողս, այլ իբրև ազատարարս. ուստի յոյժ անձնանուէր և հաւատարիմ են նոցա Ռուսիա ոչ սակաւ օգուտս ետ իկեղեցւոյ նոցա զկաթուղիկոսութիւն Էջմիածնի ընդ հովանաւորութեամբ իւրով առեալ, որով և պաշտպանել կարէ ի հարստահարութեանց զորս ընդ իշխանութեամբ Մահմետականաց են Հայք. բաց աստի ջան ի գործ արար ըստ կարեւորն բառեալ զանկարգութիւնս երևեալս ի վաղ ժամանակէ յընտրութիւն կաթուղիկոսի թէ յեկեղեցականս, և թէ ի Պարսիկ և Տաճիկ տիրապետողս երկրինս. — Ի 11 Մար-

աւի կացեալ արքայի ի դիմաց աղղի խնդրէին ի նմանէ պարգեւել այրեացեալ եկեղեցւոյն Հայաստանի փեռայ զընտրեալն նորոգ. յայնժամ հրամայեալ արքայի միւսմ յաւագանաց ամեւ առ ոսոս քահայից զընտրեալն, և այլոյ բարումն զքաւազանն Հայրապետական, հարցանէր, ուխտե՞ս և յանձն առնե՞ս պահպանել հաւատարմութեամբ զքաղաքական և զեկեղեցական օրէնս և կանոնս Հայրապետի, և իբրև նորընտիր զամենայն երզնոյր կատարել անթերի, յայնժամ հրամայէր ամեւ զնա ի վերին աստիճան քահայից. և տուեալ նմա զՔահանայապետական գաւազանն ասէր. « Բարձու իշխանութեամբս զոր պարգեւեաց մեզ Աստուած, կարգեմք քեզ Կաթուղիկոս ամենայն Հայոց »: յետ այսորիկ յարուցեալ արքայի յաթոռոյն, զճէր զմատանին ի մասն Հայրապետին, և ի ծանկն անկեալ առաջի նորա համարուէր զալն. ապա դարձեալ ի տեղի իւր հրամայէր նմա բազմիկ յաթոռ Հայրապետական որ եղեալ էր հանգեալ արքայականին. և ի բազմիկ նորա, ուխտ եկեղեցւոյն նկէր քաղցրամայն սմանեայ և զայլ երգս գեղանուագս. յետ այնորիկ սկիզբն լինէր հանգիսի օժմանս. երես 673:

տի 1836 ամի ել կարգադրութիւն գործոց Ռուսաստանի Հայոց եկեղեցւոյ, յորում թող զկանոնաւորելն դարտաքին յարաբերութիւնս նորա, ժողովեալ են գովանի չափաւորութեամբ հին ծէքս, սովորութիւնք և կանոնք եկեղեցականք: — Այսու կարգադրութեամբ ընտրին այժմ կաթուղիկոսներ Էջմիածնի, յորոց առաջինն եղև Ներսէս Ե. Յովհաննէս Ը. Կաթուղիկոս վախճանեցաւ յ7. մարտի 1842 ամի. Սիւնհոգոսն յայտարարեալ կառավարութեան զմահնորին խնդրեաց անօրինակ զընտրութենէ նորոյն, և ապա ծանուցեալ և ամենայն վիճակացն Հայոց ի Ռուսիա, ի Տաճկաստան, ի Պարսա, և ի Հինդս, խնդրեաց առաքել զպատգամաւորս յընտրութիւն Կաթուղիկոսի. վիճակ իւրաքանչիւր առաքէ երկուս պատգամաւորս, եկեղեցական և աշխարհական. եկեղեցականն է Առաջնորդ վիճակին, որ պարտի կամ անձամբ անձին գտանել կամ զայլ զք ի տեղի իւր առաքել. աշխարհականն ընտրի միշտ յերեկի մեկըքաց, իշխանաց, իւզբաշխաց ելն. օր ընտրութեանն որոշի. երկրորդն յետ տարեդարձի մահուան Կաթուղիկոսի. իսկ տեղի ընտրութեանն թիժէ չիք ինչ խափանարար է Էջմիածին. ընտրեալ պատգամաւորք թէ ոչ կարացնեն անձամբ գտանել ի ժողով ընտրութեանն, կարեն զհաւանութիւնս իւրեանց զրով հաղորդել Սինդին. բաց ի պատգամաւորաց մասնակցին յընտրութիւնն անգամք Սիւնհոգոսի, և վեց պատուարժան նպիսկոպոսներ ի միաբանից Էջմիածնի, Հրաւէր Սիւնհոգոսին ուղղեալն առ Պատրիարքն Վ. Պօլսոյ ի մասնակցութիւն ընտրութեանն, սկիզբն ունէր այսպէս:

«Գերապատիւ Պատրիարքին Հայոց մեծի Աստուածապահ մայրաքաղաքին Վ. Պօլսոյ Սրբազան Աստուածատուր Արքեպիսկոպոսի, հարազատի Մայր Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի խնդալ ի Քրիստոս», ի սոյն միտս և որ առ Երուսաղէմայն Պատրիարք, որովք յետ զմահ ծանուցանելոյ Հայրապետին, խնդրէին հրաւիրել յամենայն վիճակս իւրեանց յընտրութիւն աշխարհական և եկեղեցական պատգամաւորաց ի գտանել Էջմիածին. Ընտրութիւնն սկսեալ ի 15ն ապրիլի 1843 ամի տեւեաց զերիս աւուրս և ընտրեցաւ Ներսէս

Արքեպիսկոպոս Հաճապետեան Առաջնորդ Բնաւորապետ և Նախիջևանի:

Ի բաց առեալ զժողովուրդս Հռովմէականն կայսերութեան, Հայք զլուխ ունելով զմազաւորն իւրեանց, յատաջ քան զամենեւին ընկալան զքրիստոնէութիւն, կազմուած եկեղեցւոյն Հայոց ըստ նիւթականին նոյն է որ ինչ եկեղեցեաց Յունաց և Լատինաց. իսկ ըստ իմանալոյն միջինն երկոցունց 77). զսկզբնաւորութիւն իւր

(77) Ընդհանրապէս շատք յօտարազգի ուսեցն ի կարծիս են տակաւին թէ եկեղեցի մեր ի հերետիկոսութիւն չեղեալ է յազգապառ վարդապետութիւնէ. թէպէտ և ճմարտախնդիր և բանագէտ անձինք յամենայն ազգաց ներատես և անպառմաք քննեալ վկայեցին և վկայեն զանախա մաքրութիւնէ, զուղղապառութիւնէ և զանարատութիւնէ Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, մոռաւանդ յարժամ լանիք մերազնեայ և օտարազնեայ Հայագէտ գիտնականաց եկեղեցական և վարդապետական ինչ ինչ կարեւոր գրեան թարգմանութեամբք բացայայտ քննութեամբ առաջի եղան ուսեցոյ աշխարհին:

Չայս զատապարտելի կարծիս և անտեղի թշնամեաց բանս ի սկզբանն առին զմէնչ և խօսեցան Յղին և Լատին պատմիչք և եկեղեցականք, յորժամ Հայաստանեայց սուրբ եկեղեցի կարճեաց զյարաբերութիւն իւր ընդ նոսա:

Ի նոցանէ առեալ միամտորեն և յետոյ կրկնեցին և ազադակեցին բանիս և գրով զՀայաստանեայց եկեղեցւոյ «հերետիկոս», «միաբնակ», «նետորական», «նախազական» և ինչ. հակառակ վարդապետութեան Տեառն և Փրկչին արեղբայց: Չայսպիսի թշնամեաց բանս և ծանրալուր օտարառի անուանս արկին զմեռք և խօսեցան շատ կամ սակաւ անձինք ի հնադարեան և ի միջնադարեան ժամանակս. ապաքնն ըստ մասին ինչ ներելի են, զի յայնպիսի խաւարամած, մոխաւադ, վայրենի և եղբայրատեաց դար կեցեալք և անալք, ոչ այլ ինչ ձիւր հոգեկան բարեմասնութեանց, և զպատուս եղբայրատուր առաքելութեանց ունէին թողուլ զկնի իւրեանց, բայց թէ զոր թուին, թշնամեան, հայհոյանս, բամբասանս և անկէս, և անութեանս, ծնունդս չարին իսկ զինչ ասեմք արդեօք պատուելի ուսեցոյն սմանց վերջնայ ժամանակի, սքք ոչ գունէ ամառնն արժապաք տալ ի տանիներեկորդ դարու փռեալ, ժանկոտեալ, զատապարտելի կարճեաց նոյնն, գիտութեամբ կամ անգիտութեամբ: — Ը. Մօսէի ձեռնիք, ի «Lettres éditantes», հատ. 1. երես 255 — 256. և արեւելագէտն Լաբրոզ, ի «L'histoire du christianisme d'Ethiopie et d'Arménie», 1. հատ. 1729 երես, 327 և 328. և արեւելագէտն Լաբրոզ «կամ «Եւստիքական» և «Եփեսոսեան» . ի նոյն կարծիս է և Պ. Բ. Ս. Ս. Նիզիմեան Սвященно-Церковная География, ի որ յառնելն զընդհանուր տեսութիւն զԱրեւելեան եկեղեցւոյ այժմեան դրութիւնէ, երես 189 զնէ. «1. Ընդ-

էառ ի Եռանց 78) այլ ի վերջոյ առաւել Հը-

հանրական ուղղափառ եկեղեցի Եռանց. 2. եկեղեցի Քաղզեացոց Նեստորեանք, միացեալ Յոյնք, կամ Քրիստոնեայք որոնց Խովմայի. 3. եկեղեցի միաբնակաց կամ Եւտիքակեանաց, Յովովքեանք և Հոյք և Էջնի Նոյն դարձեալ երես 170. ուկրալէս, թէև ուղղափառք մանրին ի Եռանաստան յԱղէք ստեղծուաւ. յԱնտիք և յԵրուսաղէմ այլ կամ յայտնութեան, կամ ընդ լոռի Լատինաց, Մահմետականաց, Նեստորականաց, Հայոց, և այլոց հերետիկոսաց և:

Իսկ Պ. Ա. Օրոգովսկի ի դասադրի ընդհանրապէս աշխարհագրութեան իւրոյ Ս. Պ. բուրգ, 1863, երես 106, ի խօսքին զկրօնից ազգաց մասին, զնէ զՀայոց ու Նեստորական և:

— Եւ «Московская Ведомости», լրագիրն 1866 ամի համար 203, խօսեցեալ զընտրութենէ Վաթուղիկոսին Ելմիստնի զայ ասել Ներհակ սմին յառաջ բերեն թէ միայն Ելմիստնի Վաթուղիկոսն է օրինաւոր յաջորդ Ս. Լուսաւորին Հայոց, բայց այս կարծիք չունի պատմական հիմն. ի ժամանակէ աւերմանն և եղծմանն Հայաստանի ի Սասնեանց, Վաթուղիկոսեանք Հայոց փոխադրեցան ի Դվին, ուր և շեղեցան ի հերետիկոսութիւն ի Վաթուղիկէ ուղղափառութենէն ի ժամանակ տիեզերական յորրորդ ժողովոյն: Յետ Դուանց, աթոռ Վաթուղիկոսն քսան և հինգ անգամ փոխադրեցաւ տեղաւէ ի տեղի. ընդ որս և ի Վ. Պոլսոյ զինի. յամի 1294 ընտելութիւն կայան Վաթուղիկոսեանք ի Սին արքայանիտան Ռուբինեան իշխանութեան, ուր կացին մնացին դար և կէս ժամաւ նստաւ ցամա 1441, յորում փոխադրեցան յԵլմիստնի և:

Թող զյիշատակեալսս, են և բազումք ի հնոց և նորոց որք յայսպիսիս դատածեալ են թիւր և անտեղի կարծիս դմելոյ. մեք զի ի վեր անդր ի յառաջարանի մերում ազդարարաք թէ, չունիմք ի ձեռն զգրուածս, ուստի և վարեմք յառաջ բերել զքանն նոցա. թող տէր յաջողեցէ յայլում զիպող ժամանակի խօսեսցուք. միայն ստատօր իւր ի պատասխանի և ի կարծումն զրախօսութեանցդ և անհիմն կարծեացդ, շատ համարմք առաջի առնել յընթերցումն զոցին արդոյ գրադիտացդ զՄուղթն Ներսիսի Նորհալոյն մերոյ և այլոց ուղղափառ հարց որոյ եկեղեցւոյս մերոյ. ևս և ի ճատագովութիւն անբժ վարդապետութեան և դաւանութեան եկեղեցւոյն Հայաստանեայց, ըզբանս Պ. Եղսարտայ Դիւլբէի, որ կարկէ զգրաբան լեզու ի շատակցոցդ այսպէս. «Դաւանութիւն արեւելեան եկեղեցւոյն Հայոց որ ընդ իշխանութեամբ Վաթուղիկոսին Ելմիստնի, և վարդապետութիւն նորս զմարդեղութենէ (Բանին) տեղի առեալ է ոչ սակաւ հակառակութեանց և գրուածոց: Արեւմտեան եկեղեցւոյք որք այսու ինչորում զբաղեցան, ունեւով անկատար հմտութիւն հայերէն լեզուի, յորմէ և անկարացեալք իսկուպէս զիմաստ Հայոցի գրուածոցն ըմբռնելոյ, ստացան միայն թերի ծանօթութիւնս, և ընթերցողացն առաջի տարին անտեղի կարծիս. ի բովանդակ գրեանս, իւրոյ ընծայեալ մին և ցայմ յԵրուսալ, յորս հարցումն է զՀայոց, ոչ զազարին պղծելոյ թէ Հայք ընկալեալ են զազանգն միաբնակաց, զորս

ոռվմայ հետեցաւ քան Վ. Պոլսոյ 79), վասն զի ի վերջնոց ոչ սակաւ սպառնալիք տեսանէին ինքնագոյոյ լծան նորա*):

Եղանդ Նւտիքեայ, որ ուրանայր զերկուս բընութիւնս ի Քրիստոս, տարածեցաւ ապարէն և ի մէջ Հայոց, և ընկալիալ եղև ի վանականաց ումանց, ևս և յեպիսկոպոսաց*): այլ լրութիւն եւ

քարոզեցին Նւտիքէս վարդապետ Վ. Պոլսոյ և հետեւողք նորս Դիսկորոս պատրիարք Աղէքսանդրոյ, և Յակովբ Բարաթոս Դանծալ, որք ընդունէին ի Յիսուս Քրիստոս միայն զմի բնութիւն, այն է աստուածային: Այսպէս Հայք Մանիէ ճիւղիթ, որ ծանապարհորդեաց ի Հայս և յարինեաց ընտիր գրուած ինչ ի վերայ հին պատմութեան, և ներկայ գրութեան երկրին (Հայաստանի), և արեւելագետն Լաքրոզ բողոքակիւն, որ զերաց «պատմութիւն Քրիստոնէութեան Եթովպիոյ և Հայաստանի» համաձայնեալ են պնդել, թէ Հայք են միաբնակք և Յակորեանք. այլ միաբնակայն անտեղի է այս կարծիք: Վասն զի Հայք ոչ միայն մերժաւ են և մերժեն զնւտիքէս և զազանգաւորս նորս, և զանուանն նոցա թուեն ընդ այլոց հերետիկոսաց, զորս նզովէ եկեղեցի նոցա, այլ և յայտնապէս խոտովանին որպէս Լատին և Յոյն եկեղեցիքն, զերկուս բընութիւնս, զերկուս կամս, և երկուս ներգործութիւնս ի Քրիստոս Յիսուս Որպէս զի կարծեսցուք զօնտի կարծիս, ընդ որով արկանեն զազդ մի յարգալ ըստ այնչափ ձեռք ևն Տէս. Histoire. Dogmes, traditions et liturgie de l'Eglise Arménienne orientale. par M. Edouard Dulaurier, Paris, 1859. page I. introduction.

(78) Երեկ թէ հեղինակին ի ձեռնագրութիւն սուր Լուսաւորին ի Ղևոնդեայ ակնարկեն բանքս այն է ասելն զբնկրեւաւորութիւն իւր էառ ի Եռանց. բայց Ղևոնդոս Պատրիարք Վեսարիոյ թէ և ազգաւ Յոյն, այլ զաթոռ ունէր թաղթիթի առաքելոյն Հայաստանեայց: Հայք նախ քան զամենայն ազգս ընդգրկելով զքրիստոնէութիւնն, որում վկայէ քաջանման արեւելագետն Աէն Մարթէն և մերս արգոյ Հակոբնաւզէն ի քանի մի տեղիս յընթաց բանիցս, զի՛արդ ապա եկեղեցի նոցա ի Եռանց առնու զսկզբնաւորութիւնն:

(79) Հայաստանեայց եկեղեցի չունէր կարծօթութիւն հետեւելոյ միոյն և միւսոյն. իսկ թէ տէր և խաղաղութիւն պահպանէր ընդ ամենեանս, այդ չափ բնաւ հետեւել:

(*) Յոյնք ոչ սակաւ տառապանս և հայածանս յարուցին ընդդէմ Հայոց և եկեղեցւոյ նոցա, մահաւանդ ի վախճան Թ. և ԺԱ. դարուց:

Էնդ.

(**) Պատրիարքն Հայոց Վ. Պոլսոյ և քանի մի եպիսկոպոսեանք ընդ զէմ գինին Հռովմայ, անարժան պատրիարքական տնուան Նիքիւմ Աղբիւնու պոլսեցի որ յժէ դարու սպորինս որոյ թեամբ ինքեան սեպհականեայ զաթոռ Պատրիարքական

կեղեցւոյն և Վաթուղիկոսն միշտ մերժեցին զայն, և բազում անգամ հրապարակաւ դատապարտեցին *):

Իշխանութիւն Պապին Հռովմայ ի վերայ եկեղեցւոյն Հայոց միշտ մերժեցաւ ի Հայոց. ըստ ասելոյ աստուածաբանից նոցին, զայսպիսի իշխանութիւն ունի Պապն Հռովմայ յԲրեմսեան եկեղեցւոյ իւրում միայն, և Վաթուղիկոսն Հայոց յԻւրում Արեւելեան Եկեղեցւոյ:

Հոգեորականք սոցա որպէս միւս երկուց եկեղեցեացն կազմեն զառանձին ընկերութիւն տարբեր միանգամայն յաշխարհականէն, և բաժանեն յինն կարգս ըստ աստուածաբանական վարդապետութեան զինն դասուց հրեշտակաց առաջի աթոռոյն Աստուծոյ. նախաթոռ և զլուխ է Վաթուղիկոսն. երկրորդ յետ նորա Պատրիարքունք. ապա Արքեպիսկոպոսունք և Եպիսկոպոսունք. զանաւորութիւն սոցա (Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց) միայն ի տիրոջն է, և քահանայք, սորա երեքին՝ առաջին աստիճանն են Հոգեորականութեան. յետ առաջնոցս են երեքին սորա, Աւագ Սարկաւազունք, Սարկաւազունք, և Քահարէկալք, յետ ամենեցուն Սաղմոսասացն, Ընթերցողն և Դռնապանն:

Ջատիւնէ և զիշխանութիւնէ Վաթուղիկոսին ի վեր անգր խօսեցաք որ ինչ արժանն է. իսկ Պատրիարքունք Երուսաղէմի և Վ. Պօլսոյ են փոխանորդք Վաթուղիկոսի. Արքեպիսկոպոսունք նշանակին առաջնորդք վիճակաց, և Եպիսկոպոսունք՝ յաջորդք, և այլ եկեղեցականք ի պէսպէս գործաւ: — Ի Վաթուղիկոս և յԵպիսկոպոս ընտրին միշտ միակեաց կրօնաւորք, և ընակին ի վանս. քահանայք ընտրին ի ժողովրդոց և առնուն զկարգ ձեռնադրութեան յԵպիսկոպոսէ:

ի Կ. Պօլիս, մեծամեծ հալածանս յարոյց ընդդէմ՝ այնոցիկ, որք ոչ ընդունէին զմի ընտրութիւն ի Բրիտանոս. Վաթուղիկոսն Իմիթիանի և մեծ մասն եկեղեցականաց Հայոց միշտ հեռի կացին յայտնաէ (երկուս խոնարհ ընտրութիւնս ի Բրիտանոս և մեք ուղղափառ մտքս զանչփոթ միաւորութիւնն յայտ արարեալ ընդ զմի Եւտիքեայ, և մի ընդդէմ Նեստորի):

(*) Մեծահռչակ աստուածաբանք Հայոց Ներսէս Շնորհ. Վաթուղիկոս, և Ներսէս Լամբ. յայտնապէս մերժեցին զայս աղանդէ:

Քահանայք պարտին ամուսնանալ նախ քան զձեռնադրութիւնն, բայց լինել միապսակք: — Եկամուտք Վաթուղիկոսին (Վաթուոյն) զոյանան.

1. Երբեք նախապատուութեանց ուխտաւորաց:

2. Ի վանուց Հայոց:

3. Ի որք ժողովին ի ժողովրդոց միանգամ յետ երկից ամաց:

4. Ի զոյից վախճանեալ մեծատիճան եկեղեցականաց:

5. Ի մեծ գումարաց նուիրելոց յԵպիսկոպոսաց ի քահանայից և ի ժողովրդոց վանս Ս. Միլոսնի:

6. Ի տարեկան տրոց գիւղից Էջմիածնի, յորոց մեծն է Էջմիածին:

Եպիսկոպոսունք շահին արդեամբք վանուց իւրեանց և ի պէսպէս տրոց ժողովրդոց իւրեանց, զորս յառաջ ի մնասակար դէպս ի կիր առնուին. սոցա հասանեն և զոյք վախճանեալ անդաւակ քահանայից թեմից նոցին. հինգք են համօրէն վիճակք Հայոց ի Ռուսաստան 80):

Ոչ ամենայն քահանայ Հայոց ունի զորոշեալ ինքեան ծուխ. են գեղք, յորս գտանին երեք, չորս քահանայք, և ամենեքեան մասն յարդեանց հովուեցելոցն առնուն. յայնպիսի տեղիս մինն ի նոցանէ զաւագութեան ունի պատիւ, և յինչ յինչ դէպս՝ իշխէ միւսոցն. ի բազում տեղիս ի շինութիւն պիտոյից եկեղեցւոյ և քահանայից են այգիք, պարտէզք, անդք, արօտք, և ին. և սեպհականութիւնք են եկեղեցւոյ, այլ զխաւոր արդիւնք քահանայից են տասանորդքարմոնաց՝ զոր ստանան ի ժողովրդոց և բաժանեն ի մէջ իւրեանց, աւագերիցուն բաժին հասանելով կրկին. — Վասն ծիսակատարութեանց և սրբազնագործութեանց աղօթից, տնօրհնեաց, թաղման, մկրտութեան և ին. առնուն վարձ ինչ՝ այլ ոչ որոշեալ. յայսպիսի դէպս նուէրք լինին և եկեղեցւոյ. զօ. ի մեռանել ուրուք՝ ամենայն հանդերձք նորա հասանեն եկեղեցւոյ 81):

(80) Վեց են Արքեպիսկոպոսական վիճակք Հայոց ի Ռուսաստան. Երեւանայ, որ համարի Թեմ Վեհափառ Վաթուղիկոսին Իմիթիանի, Տփլիսեաց, Շամախուց, Ղարաբաղու, Հաճղերիտի և Կոր - Նախիւեանի:

(81) Զհանդերձս մեռելոցն, որ և կողպուտ տոբ, սոջոր են ի տեղիս տեղիս քահանային տալ, և ի տեղիս տեղիս ժամակուց:

Հայ քահանայք՝ գրեթէ առանց բացառութեան անկիրթք են. ի պատանեկեան հասակի իւրեանց պարապին ի ծառայական արհեստս կամ ի տուրևառս. ապա ցուցեալ զբաղձանս լինել քահանայ, ընտրին ի ժողովրդոց և ընծային ի նոյն կուլումն. պահանջի ի նոցանէ միայն զիտել և կատարել զեկեղեցական ծէսս և արարողութիւնս. և յետ առնելոյ զաստիճանն, նսիս քառասորեայ պահօք և աղօթիւք սրբեալ զանձինս, ապա մատչել ի քահանայագործութիւնս Երիցս (հեղինակն գնէ երկիցս սխալմամբ) յաւուրն՝ յառաւօտու, ի ճաշու, և յերեկոյի պաշտին ժամերգութիւնք և վասն իւրաքանչիւր աւուր են առանձին առանձին երգք և աղօթք:

Ի կիրակէս և ի մեծահանդէս աւուրս մատուցանեն զպատարագ. յայլ աւուրս՝ յորժամ տուրս ընկալցին յումեքէ:

Բաղում անգամ օրինադրեցաւ յաւուրս Կիրակեից քարոզել յեկեղեցւոջ զբանն կենաց, այլ ոչ բնաւ լսելի եղև. զի քահանայք տգէտք են:

Պակասի ի սոցանէ և օրինաւոր գրեան վարդապետութեան քրիստոնէական հասարոց և օրինաց. զոյ տպագրեալ յԵրևան (փոխանակ ասելոյ ի Տփլիս)՝ Քրիստոնէական վարդապետութեան հրահանգ ինչ, յօրինակէ Քրիստոնէականին Պղատանի Մետրապօլիտն Ռուսաց, ըստ համարի իսպառ անուղիղ, նա թէ մեծ մասն քահանայից անկարանան ըմբռնել զայն:

Յաւազ հինգաբարժու Հայ քահանայք լուսնան զոտս ժողովրդոց. ժողովուրդք խոստովանին քահանայից, իսկ ի չգտանել քահանայի կարեն խոստովանիլ և աշխարհական անձին. մինչև անգամ եթէ մօտալուտ վտանգ ումէք առաջի կայցէ որպէս ընդ փլածովք անկանել, ի բարձանց գահալիժել ևն. առ ի չկարելոյ հաղորդ գտանել կենարար Մարմնոյ և Արեան Տետան, սակաւ ինչ հող արկանէ ի բերանն:

Չքահանայս կոչեն անուամբս «Տէր», յողջունելն զնա ասեն «օրհնեմ Տէր», և նա ասէ «Աստուած օրհնեցէ»: զվարդապետս կոչեն «Հայր սուրբ»: յողջունելն զնա ասեն «Աստուած օգնական», և նա պատասխանէ «Աս-

տուած պահպան»: Ի Զատիկն ողջունեալ զմիմեանս ըստ սովորութեան Յունաց ասեն, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», և միւսն «օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Արձական դատք և վճիռք Հայոց լինին ի ձեռս Եպիսկոպոսաց և հօգևոր ատենից նոցին. և են գլխաւորապէս վէճք քահանայից ընդ միմեանս, յողորդ աշխարհականաց զեկեղեցականաց, անբաւականութիւնք ընդ մէջ ամուսնաց, այլ լուծումն գրեթէ անհնարին:

Մեր ի վեր անդր խօսեցաք զՀայոց Պապականաց (ԿՈՒՅԱՐԵ) և դարձեալ սակաւութեամբ երկրորդեմք աստէն. Ասացաք անդանօր թէ Հայոց եկեղեցին ոչ երբէք բաժանեցաւ ի Հռովմէականէն յայտնի վճռով, և թէ բաղում անգամ խոստովանեցաւ թէ ոչ զիշխանութիւն Պապին, զոնէ զպապութիւնն իբրև կեդրոն եկեղեցական միութեան. այլ զօղ միութեան նոցա այնչափ թոյլ էր, մինչ զի երբեմն ի Հայոց, երբեմն ի Լատին քարոզաց փորձ փորձեցաւ յառաւել ամրապինդ հաստատել զՀայս ընդ Հռովմէական աթոռոյն. ինքեանք Պապք Հռովմայ պահանջէին միայն զմիութիւն վարդապետութեանց և խոստովանել զպապութիւնն, տալով Աթուղիկոսին զամենայն իրաւունս Պատրիարքականս, և խոստովանելով զանկախութիւն եկեղեցւոյ նորա ի ներքին վարչութեան իւրում:

Մեծածիղն փորձքս պարբերիկ երկուս ծնան մասունս. մի մասն բառնալ կամեր իսպառ զաղպային եկեղեցին Հայոց փոխելով զեկեղեցական (գրարար) լեզուն ի Լատինականն, որպէս ի միւս Արևմտեան Աթուղիկաց եկեղեցիս, զՀայերէն աւարտողութիւն պատարադին ընդ Հռովմէականին, բառնալ զպատրիարքութիւն և կաթուղիկոսութիւն, և փոխան կաթուղիկոսի գահերէց ժողովրդեան, կամ գէթ սոսկ անուամբ պատրիարք. միւս մասն կամեր պահպանել անխախտ զամենայն որ ինչ ազգային է թէ զլեզուն ի պատարադին, թէ զծէսս և սովորութիւնս, և թէ զամենայն ինչ, այլ պահելով զամբողջութիւնն՝ միացուցանել ընդ Պապականին — Յառաջնոցն անտի էր Բարդուղիմէոս եպիսկոպոս Լատինաց և Յովհան Գոնցի աշակերտ նորա յամի 1317, որոց եղև

Հետևողք բազումք ի հարաւային սահմանս Սովկասու, ի Տփլիս, ի Նախիջևան և Խրիմ, որք հաստատեցին զկրօնական ընկերութիւն Հայոց Ունիթորաց, հետևողաց ի սոյն նպատակ:

Անհետացան Ունիթորք, միայն ի նոցանէ կանգնեալ եկեղեցիք մասամբ իւրք մնացեալ իցին թերեւ 82), Եյսպէս և Յիսուսեանք, և այլ Լատին քարոզիչք ջան ի գործ եղին վասն այսորիկ թէև Պապք Հռովմայ արգելուին զայն ամենայն, որ ինչ ի կործանումն բերիւր ազգային եկեղեցւոյ Հայոց, և փոխելոյ արարողութեան պատարագին ի Լատինականն, և ցուցանէին զհաւանութիւն իւրեանց երկրորդ կողմանն: Հայք Լեհաստանի պատրիարքաւն իւրեանց յամի 1616 միաւանեցան ընդ Հռովմայ:

Գլխաւորագոյնն յերկրորդ կուսէ եղև Մխիթարեան ուխտ հիմնեալ ի սկզբանն ի Մորա, ապա ի սուրբ Ղազարն Վննետոյ: Մխիթար Հայ վանական ծնեալ ի Սերաստիա փոքուն Եսիոյ յամի 1676՝ այր ուսումնասէր և ազգասէր, լին հոգեւոր և մտաւոր բարեմասնութեամբք, և սիրող Եւրոպական լուսաւորութեան, կամեցաւ յոտին կանգնել զտառապեալ ազգ իւր, վասն որոյ նուիրեալ օգտի նորա զանձն իւր, հպատակեցաւ Պապին Հռովմայ, և ըստ նորայն թողտուութեանն հաստատեաց զմիաբանութիւն և զվանս, ուր ընկալեալ լինէին միայն Հայազգիք, կառոյց զտպարան, և սկսան ինքն և ընկերք իւր և յաջորդք թարգմանել զգիրս յամենայն լեզուաց ի Հայկականն, և առաքել կարաւանաւ ի Հինդս և ի Պարսս, և այսպէս ոտն առ ոտն յառաջ խաղացեալ, ջան դնեն ի լուսաւորութիւն ազգին:

Մխիթար՝ ըստ յայտնի ցուցանելոյ բնաւորութեանն իւրոյ, էր այր ոմն նման Ներսիսի (Վաթուղիկոսի):

Բաղդա՝ են Հայ Հռովմէադաւանք ի Վրաստան, որք յոյժ զարչին ի միւս Հայոց և ոչ ա-

նուանն զինքեանս Հայ, այլ կաթողիկ. որպէս թէ անունդ կաթողիկ զազգութիւն յայտ առնէ. յարաբերութիւն նոցա ընդ Հռովմայ է ի ձեռն Իտալացի կրօնաւորաց:

Բաց աստի փորձք տեսան ոչ սակաւ միաբանել զեկեղեցին Հայոց ընդ Յունականին, և թէև ոչ յաջողեցաւ, բայց յարեմտեան ափունս Եփրատայ ի հիւսիս յԱրարկերայ, և 30 ժամուք հետ ի Տիարպէքիւրայ (Տիգրանակերտ) են վից գեօղք Հայոց, յորոց մեծագոյնն է Աղա կամ Աղունտս, որք միացան ընդ Յոյնս:

Ջանացին և Բողոքականք, Բազելեան քարոզիչք (միսիսնար) բացին ի Շուշի վարժարան Հայոց, որ փակեցաւ հրամանաւ Վաթուղիկոսին, իւր մնասակար ինչ:

Չայլ դպրոց ինչ և տպարան հիմնեցին Անգղիացիք ի Սպկաթայ:

Ռուսաստան աշխատ չեղև երբէք դարձուցանել զՀայս յիւրն եկեղեցի:

Եյն ինչ յաւարտ երանէր տպագրութիւն գործոյ, հասուցին յունկն մեր զցաւային լուր, թէ առաքինի և բարեխաղ այրն, օգտամատոյցն հայրնակցաց իւրոց, Պատրիարքն Էջմիածնի և Վաթուղիկոսն ամենայն Հայոց Ներսէս, յետ անձնանուէր և եռանդալին ծառայութեանն Եկեղեցւոյն իւրոյ և Տէրութեանն, յանկարծահաս մահուամբ լիք եթող զազգաւոր կեանս աստեաց, ի 13 Փետրուարի այսր ամի (այս ինքն 1857) ի Տփլիս, ի հասակի 96 ամաց, զառամեալ և անցեալ դաւուրք, նուազեալ և հիւժեալ բնականապէս (Փիղիբապէս) և բարոյապէս, դարձեալ ոչ յետս կատար և թուլանայր ի տաճկ տաւաղել զհօտ իւր բանաւ որ մինչև նաև ցնախնթոյց երեկոյ մահուանն:

Յիշատակ և արարք նորա կայցին մնացին յաւերժ ի յուշ և ի միտս երախտապարտ Հայ ազգի որ ընդ երկար զգալոց է զկորուստ իւր:

Պարտպատումք յարգանք աւանդեցին զանուն նորա յապագային:

Ուսման և Գործունէութեան:

(Տե՛ս Գործունէութեան)

(82) Ի բազում գիւղորայս գաւառին Երեւակու է տեսանել զերկրամաստունս նոցին և եկեղեցիս կիսակործանաւ — Զորոց ասացաք լիովին ի մերում աշխատասիրութեան ուշնութիւնք հայրենեաց ի գաւառին Երեւակու և: